ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1951 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ղ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ «ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությամբ լույս է տեսել փիլիսոփայական գիտությունների թեկնածու ընկ. Ղ. Վարդապետյանի «Հնարավորության և իրականության դիալեկտիկան» աշխատությունը։ Հեղինակի նպատակն է եղել մեր երկրում սոցիալիստական հասարակության կառուցման հարուստ փորձի հիման վրա լուսաբանել մարքսիստական դիալեկտիկայի կարևորագույն կատեգորիաներից մեկի՝ հնարավորության և իրականության փոխհարաբերության հարցը։

Գրքում իրավացիորեն մատնանշվում է, որ նախամարքսյան փիլիսոփայությունը ի վիճակի չեղավ և չէր էլ կարող լրջորեն առաջադրել և լուծել այդ հարցը, որ հնարավորության և իրականության, ինչպես և փիլիսոփայության մյուս բոլոր կատեգորիաները, առաջին անգամ իրենց ամբողջ խորությամբ ու նշանակությամբ առաջադրվել և լուծվել են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների կողմից։ Հեղինակը վերլուծության է ենթարկում իդեալիստական, մետաֆիզիկական կոնցեպցիաները՝ հետազոտվող հարցի մասին։ Իդեալիզմը՝ ժխտելով աշխարհի, իրականության օբեկտիվ ռեալականությունը, դրանով իսկ հնարավորությունը զրկում է իր օբեկտիվ հիմքից, ապա վերածում ֆիկցիայի, աբստրակտ, միստիկական գունավորում տալիս նրան։ Իդեալիստները «բացատրելով» օբեկտիվ աշխարհն ու նյութական օրինաչափությունները, զարգացման և առաջխաղացման օրենքները՝ հնարավորությունը կտրում, անջատում են ամեն մի իրական հողից՝ ներկայացնելով այն ինքնաբավ նշանակությամբ, որով և ջնջվում է հնարավորության ու իրականության միջև եղած ամեն մի սահման՝ վերջինը լուծելով աստծու մեջ։

Մետաֆիզիկական կոնցեպցիան ևս հնարավորության և իրականության ու նրանց միջև եղած փոխհարաբերության հարցը թողնում է չբացահայտված, որովհետև այն բնության և հասարակական երևույթների ուսումնասիրում է մեկուսացած ձևով, չրջապատող երևույթների կապակցությունից դուրս, անշարժության, անփոփոխելիության կացության մեջ։ Մետաֆիզիկան զարգացման պրոցեսը դիտում է որպես չրջանաձև շարժում, որտեղ սոսկ քանակական փոփոխություններ են տեղի ունենում, քանակական փոփոխությունները չեն հանգեցնում որակական,արժատական փոփոխությունների։ Նա ժխտում է բնության և հասարակական երևույթներին հատուկ ներքին հակասությունները, պայքարը հնի ու նորի, մեռնողի և ծնվողի միջև, որը կազմում է զարգացման պրոցեսի ներքին բովանդակությունը։

Դրախոսվող աշխատության մեջ «հնարավորության և իրականության պրոբլեմի մեկնաբանումն ու լուծումը հակադրվում է, մի կողմից՝ վոլունտարիզմին, որը բացասում, ժխտում է հնարավորության օբեկտիվ հիմքը— ռեալ աշխարհն իր օրինաչափություններով հանդերձ, որով և հնարավորություններին տրվում է միանգամայն միստիկական, ոչ մի ձևով չորոշվող բնույթ, իսկ մյուս կողմից՝ նա հակադրվում է բուրժուական օբեկտիվիզմին ու ֆատալիզմին, որը հնարավորությունը նույնացնում է իրականության հետ՝ ավելորդ դարձնելով նպատակադիր գործունեությունը, ռեոլյուցիոն գործուն քայլերը»։ (Նույն տեղ, էջ 3)։

Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես հասարակական զարգացման ողջ պրակտիկան հերքում է վոլունտարիզմը որպես հակագիտական, ռեակցիոն տեսակետ։ Վոլունտարիզմի տիպիկ ներկայացուցիչներ էին Ռուսաստանում նարոդնիկները, որոնք իդեալիստական դիրքերից ելնելով, իրենց պրակտիկ գործունեությունը կառուցում էին ոչ թե հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջների վրա, այլ դրանց հակառակ՝ կառուցում էին ռեալ կյանքից կտրված ուտոպիական պլանների, նախագծերի վրա։ Դրանով պետք է բացատրել, որ այդ

1 Ղ. Վարդապետյան, Հնարավորության և իրականության դիալեկտիկան, էջ 24։

«պլաններեր» լինելով ֆանտաստիկական, դեռ չպրովեցին պատմության կողմից։ Վոլունտարիստները՝ ժխտելով աշխարհի օբեկտիվ ռեալականությունը, դրա հետ մեկտեղ բացառում էին օբեկտիվ ճշմարտությունը, ազատում իրականությունը, հնարավորությունը զրկում իր ռեալ հիմքից, դրսևորում իրենց կատարյալ անընդունակությունը ըմբռնելու հնարավորությունն իրականության փոխարկելու կոնկրետ ուղիներն ու միջոցները։

Ֆատալիստական կոնցեպցիան իր հերթին ժխտում է սուբյեկտիվ գործոնների դերը հասարակության զարգացման գործում։ Նա ամեն կերպ փորձում է նվազեցնել կամքի և գիտակցության դերը հասարակական զարգացման մեջ, բացառում է վերնաշենքի ակտիվ ներգործությունը բազիսի վրա։ Բանվոր դասակարգի թշնամիներից շատերը, հենելով ֆատալիստական այս գիրքերից, ջանում էին հերքել պրոլետարական ռևոլյուցիայի ու պրոլետարիատի դիկտատուրայի, կոմունիստական պարտիայի մարքսիստական-լենինյան թեորիայի վիթխարի ու վճռողական դերն ու նշանակությունը բանվոր դասակարգի ազատագրման գործում։ Նրանք պաշտպանում ու վահանի վրա էին բարձրացնում տարերայնության «թեորիան», փորձում էին «ապացուցել», որ կապիտալիզմը իբր թե խաղաղ կերպով, ինքնահոսով «վերածվում է» սոցիալիզմի մեջ, որ սոցիալիզմի հնարավորությունը իրականություն է դառնում առանց ռևոլյուցիոն-քաղաքական պայքարի։

Գրախոսվող գրքի հեղինակը, այնուհետև պարզաբանում է հնարավորության և իրականության հասկացողությունները. «Իրականությունը,— գրում է նա,— մարդու կամքից, գիտակցությունից դուրս գոյություն ունեցող ռեալ, օբեկտիվ աշխարհն է՝ վերցված իր կոնկրետ, պատմականորեն որոշակի կեցությամբ» (էջ 19)։ Օբեկտիվ աշխարհը ծավալի տեսակետից ավելի լայն և բնդարձակ հասկացողություն է, քան իրականության հասկացողությունը։ «Իրականությունը օբեկտիվ աշխարհի գոյության որոշակի կոնկրետ ձևն է, օբեկտիվ աշխարհի զարգացման որոշ աստիճան» (էջ 20)։ Հեղինակը նշում է, որ վերացական, այստեղակտ իրականություն չկա, այլ կա պատմականորեն որոշակի և կոնկրետ իրականություն, որով պայմանավորվում է նաև հնարավորության կոնկրետությունը։ Անտագոնիստական դասակարգերի բաժանված հասարակություններում նոր հասարակակարգը իրականության փոխարկելու հնարավորությունը իրականացվում է կատաղի դասակարգային պայքարի, ռևոլյուցիայի ճանապարհով։ Մեր սովետական սոցիալիստական հասարակակարգում հնարավորությունը իրականության է փոխարկվում ոչ թե դասակարգային պայքարի ճանապարհով, որովհետև մեզանում չկան անտագոնիստական դասակարգեր, այլ սովետական ժողովրդի՝ պատմության մեջ չտեսնված բարդարական ու ստեղծագործական բուռն ակտիվության, խանդավառության, հերոսության միջոցով։ Այդ փոխարկումը կատարվում է ոչ թե ինքնահոսի, այլ ժողովրդի պլանաչափ, գիտակցական պայքարի միջոցով։ Հեղինակը իրավացիորեն մատնանշում է. «Հնարավորության և իրականության միջև ընկած «տարածության» մեջ ամենավճռանգավոր խոչընդոտներից մեկը պասսիվությունն է։ Ընդհակառակը, այդ «տարածությունը» կրճատելու և լիովին վերացնելու հիմնական միջոցը կամ գենը պայքարն է, դեպի առաջ ընթացող նպատակային չարժումը, բոլոր հնարավորությունների և միջոցների ակտիվ գործադրումը» (էջ 37—38)։ Սովետական սոցիալիստական հասարակակարգի ընձեռած վիթխարի հնարավորությունները մարմնավորվում են կոմունիզմի կառուցման մեծ գործերի մեջ՝ բոլշևիկների պարտիայի ու սովետական պետության իմաստուն ղեկավարության շնորհիվ։

Գրախոսվող գրքի հեղինակը պարզ և մատչելի լեզվով բացատրում է նաև հնարավորության հասկացողությունը։ Հեղինակը նշում է, որ աբստրակտ, վերացական հնարավորություն գոյություն չունի, այլ կան պատմականորեն որոշակի, կոնկրետ հնարավորություններ։ Սվ դա միանգամայն հասկանալի է, որովհետև ամեն մի ռեալ հնարավորություն իր հիմքն ու նախադրյալն ունի որոշակի, պատմական կոնկրետ իրականության մեջ։ Վերջինս է ստեղծում այդ հնարավորությունը և իրենով պայմանավորում է այն։ Հնարավորության կատեգորիան հասկանալու համար պետք է տարբերել աբստրակտ հնարավորությունը ռեալ հնարավորությունից։ Դրանցից առաջինը վեր է կանգնած տվյալ կոնկրետ իրականությունից, հիմք ու նախադրյալ չունի նրա մեջ, ի վիճակի չէ փոխարկվելու իրականության։ Դրան հակասակ, երկրորդը՝ ռեալ հնարավորությունը՝ իր հիմքը ու նախադրյալները ունի տվյալ, կոնկրետ իրականության մեջ, ստեղծվում ու պայմանավորվում է վերջինով, իր մեջ պարունակում է բոլոր նախադրյալները իրականության փոխարկվելու համար։ Բայց, այստեղից բնավ չի բխում, թե իրականությունն ու ռեալ հնարավորությունը միևնույն բանն են։ Կոպիտ սխալ կլինի նույնացնել հնարավորությունը իրականության հետ։ «Սոցիալիզմի կառուցման հնարավորության և նրա իրական կառուցման միջև մեծ տարբերություն կա։ Չի կարելի հնարավորությունը շփոթել իրականության

հետո (Ի. Վ. Ստալին, Երկեր հ. 11, էջ՝ 262)։ Ընկեր Ստալինը ուսուցանում է, որ պետությունների, բանակների պատմության մեջ եղել են դեպքեր, երբ հաղթության համար եղել են բոլոր հնարավորությունները, բայց դրանք ապարդյուն են մնացել, որովհետև ղեկավարները չեն նկատել դրանք, չնորհք չեն ունեցել օգտագործել այդ հնարավորությունները և պարտություն են կրել։ Եթե առանձին ձեռնարկություններ թերակատարում են արտադրական պլանը, պատճառը այն է, որ նրանց ղեկավարները չեն կարողանում բացահայտել պլանների կատարման համար եղած մեծ հնարավորությունները, ուշի-ուշով հաշվի չեն առնում և լիովին չեն օգտագործում դրանք։

«...Պետք է տարբերել մեր հասարակակարգում գոյություն ունեցող հնարավորությունները այդ հնարավորությունների օգտագործումից, այդ հնարավորություններն իրականություն դարձնելուց» (Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 12, էջ՝ 383)։

Հնարավորությունները տարերայնորեն չեն ծնվում։ Ստալինյան հնգամյակների կատարման ու դերակատարման, Հայրենական պատերազմում Սովետական Բանակի տարած մեծ հաղթանակի հնարավորությունները ստեղծվել են Լենինի—Ստալինի իմաստուն պարտիայի կողմից գլխավորվող սովետական ժողովրդի բազմամյա հերոսական պայքարի շնորհիվ։ Վիթխարի են սովետական սոցիալիստական հասարակակարգի հնարավորությունները, որոնք թույլ են տալիս կարճ ժամկետներում իրականացնել կոմունիզմի կառուցման համաշխարհային պատմական մեծ խնդիրները։ Անհրաժեշտ է լիովին հաշվի առնել այդ հնարավորությունները և լիովին օգտագործել կոմունիստական հասարակակարգի կառուցման համար։

Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Մարքսը և Էնգելսը՝ հայտնագործելով կապիտալիստական հասարակության զարգացման օրենքները, հանճարեղորեն ցույց տվեցին պրոլետարիատի՝ որպես կապիտալիզմի գերեզմանափորի համաշխարհային պատմական դերը, գիտականորեն ապացուցեցին կապիտալիզմի կործանման ու կոմունիզմի հաղթանակի անհրաժեշտությունը. նրանք ցույց տվեցին, որ պրոլետարական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով է միայն հնարավոր տապալել կապիտալիզմը և ստեղծել սոցիալիստական հասարակակարգ։ Դրանով իսկ նրանք գիտականորեն բացահայտեցին բանվոր դասակարգի ազատագրման ռեալ հնարավորությունները և դրանք իրականություն դարձնելու կոնկրետ ուղիներն ու միջոցները։ Սակայն պրոլետարիատի ազատագրման հնարավորությունը իրականություն դարձնելու հարցի մշակումը բանվոր դասակարգի պարտիայի համար տեսական և պրակտիկ մեծ նշանակություն ձեռք բերեց հատկապես իմպերիալիզմի դարաշրջանում, երբ պրոլետարական ռևոլյուցիան անմիջական պրակտիկ հարց էր դարձել, երբ վրա էր հասել կապիտալիզմի հիմքերի դեմ ուղղակի գրոհելու ժամանակաշրջանը։ Պատմական նոր իրադրության պայմաններում պրոլետարիատի հանճարեղ ուսուցիչներ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը մեկ, առանձին վերցրած կապիտալիստական երկրում սոցիալիզմի կառուցման վերաբերյալ իրենց դարագլուխ կազմող ուսմունքի մեջ բազմակողմանիորեն և հանճարեղ խորաթափանցությամբ մշակեցին հնարավորության և իրականության փոխհարաբերության, դրանցից առաջինը երկրորդին փոխարկելու կոնկրետ ուղիների ու միջոցների հարցը։ Դրա համար էլ բնական է, որ ընկ. Ղ. Վարդապետյանի աշխատության առանցքն է կազմում մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության և այդ հնարավորությունն իրականություն դարձնելու լենինյան-ստալինյան ուսմունքի չարադրումն ու լուսաբանումը։ Գրախոսվող գրքի հեղինակը ցույց է տալիս, որ կոնտրռևոլյուցիոն տրոցկիզմի, կապիտալիզմի աջ ռեստավրատորների իդեական ջախջախումը անհրաժեշտ պայման հանդիսացավ մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի համար։ Գրքում հեղինակը կանգ է առնում սոցիալիզմի կառուցման հնարավորությունն իրականություն դարձնելու կոնկրետ ուղիների ու միջոցների վերլուծության, մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման ու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցերի վրա։

Հեղինակն իր աշխատության մեջ ընդգծում է բոլշևիկյան պարտիայի, սովետական պետության վճռողական դերը մեր երկրում սոցիալիստական հասարակակարգի կառուցման գործում, ցույց է տալիս պարտիայի բաղաքական գծի և նրա կենսագործման վճռական դերն ու նշանակությունը սոցիալիզմի կառուցման հնարավորությունը իրականություն դարձնելու գործում։

Իր դրական կողմերով հանդերձ ընկ. Վարդապետյանի աշխատությունը զերծ չէ թերություններից, որոնք երբեմն չատ լուրջ են և անթույլատրելի։

Առաջին հերթին պետք է նշել, որ գրախոսվող գրքույկը հագեցված չէ նորի զգացումով, նրանում չի զգացվում հեղինակի ձգտումը՝ ուսումնասիրել և փորձել լուծելու այն հարցերը, որոնք առանձնապես հետաքրքրում են մեր ժողովրդին՝ նրա պայքարի ու ստեղծագործական

աշխատանքի ներկա էտապում։ Դրա փոխարեն հեղինակը նախընտրել է կանգ առնել այն պրոբլեմների վրա, որոնք վաղուց արդեն լուծված են թե՛ տեսականապես և թե՛ գործնականում։ Նա գրում է այնպիսի հնարավորությունների մասին, որոնք վաղուց արդեն իրականություն են դարձել։

Այն պայմաններում, երբ Սովետական Միությունում աստիճանական անցում է կատարվում սոցիալիզմից դեպի կոմունիզմ, ընկ. Վարդապետյանը հնարավոր է համարում սահմանափակվել միայն մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը պարզաբանելով և այն հարցով, թե ինչպես այդ հնարավորությունը վերածվեց իրականության։ Իր աշխատության առաջաբանում նա դրում է. «Աշխատության շրջանակները հնարավորություն չեն տվել մեզ օգտագործելու սովետական պրակտիկայի շատ ուրիշ կողմերը, հիմնականում սահմանափակվել ենք սոցիալիզմի հաղթանակի հետ կապված օրինակներով ու փաստերով» (էջ 4)։

Բայց ո՞վ արդյոք սահմանափակեց հեղինակի «աշխատության շրջանակները», ո՞վ նրան զրկեց հնարավորության և իրականության դիալեկտիկան քննարկելու իրավունքից ոչ միայն ՍՍՌՄ-ում սոցիալիզմի կառուցման ասպեկտով, այլև սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ասպեկտով։

Պարզ է, որ այդ «նեղ շրջանակները» և «սահմանափակ հնարավորությունները» որոշվել են հենց իր՝ հեղինակի կողմից։

Ինքնին հասկանալի է, որ ներկայումս, երբ սովետական ժողովուրդը Լենինի—Ստալինի իմաստուն պարտիայի ղեկավարությամբ, տիտանական ստեղծագործական աշխատանք է տանում կոմունիստական հասարակակարգի կառուցման համար, գրախոսվող գրքի հեղինակը պետք է իր աշխատության մեջ հանգամանորեն լուսաբաներ կոմունիզմի տնտեսության ստալինյան ծրագիրը, Սովետական Սոցիալիստական պետության՝ որպես կոմունիզմի կառուցման հիմնական գործիքի դերն ու նշանակությունը, մեր երկրում կոմունիզմի կառուցման վիթխարի հնարավորությունները, կոնկրետ ուղիներն ու միջոցները և դրանք կոմունիզմի հաջող տնտեսության գործի լիովին օգտագործելու հարցերը։

Այդ հնարավորությունն ուներ հեղինակը։ Ընկեր Ստալինը պարտիայի 18-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ, որը կոմունիզմի ծրագրային մեծ փաստաթուղթն է հանդիսանում, կոնկրետացնելով և զարգացնելով մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին լենինյան թեորիան, հանճարեղ եզրակացություն արեց այն մասին, որ մեր երկրում հնարավոր է կառուցել կոմունիզմը նաև այն դեպքում, եթե պահպանվի կապիտալիստական շրջապատումը, ստեղծեց ամբողջական և լիավարտ ուսմունք՝ սոցիալիստական պետության մասին։

Սակայն ընկեր Ղ. Վարդապետյանը այդ հարցերին նվիրում է ընդամենը 4 էջ (տես էջ 117—120)։ Չնայելով, որ ինքը՝ հեղինակը գրքի առաջաբանի առաջին իսկ պարբերության մեջ ընթերցողին ազդարարում է, որ հնարավորության և իրականության պրոբլեմի ճիշտ լուծումը մեծ նշանակություն ունի լիակատար կոմունիստական հասարակակարգ կառուցելու գործում, սակայն նա այդ մասին չի խոսում։ Իսկ ի՞նչ է ասվում վերևում հիշատակված 4 էջերում։ Ընդհանուր գծերով մատնանշվում է մի երկրում կոմունիզմի կառուցման հնարավորության պատմական նշանակությունը։ Հեղինակը հանգամանորեն չի խոսում կոմունիզմի կառուցման համար մեր երկրում եղած վիթխարի հնարավորությունների, ուղիների և միջոցների մասին. կոմունիստական հասարակակարգի նյութական-տեխնիկական հիմքերի, հոգևոր կուլտուրայի առատության ստեղծման մասին, դասակարգային տարբերությունների վերացման, մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության, քաղաքի և գյուղի միջև նախկինում եղած հակադրության մնացորդների վերացման մասին։ Աշխատության մեջ, ինչպես նշվեց արդեն, քիչ տեղ է հատկացված նաև սոցիալիստական պետության՝ որպես կոմունիզմի կառուցման հիմնական գործիքի դերի ու նշանակության լուսաբանմանը։

Մեր օրերի ամենից ավելի ակտուալ և հրատապ հարցերից հեռանալու կամ մի քանի «պատկերավոր», բայց քիչ բովանդակալից ֆրազների միջոցով, այդ հարցերից աղատվելու ձգտումը հեղինակի մոտ երևում է այն փաստից, որ քննարկվող գրքում փաստորեն մոռացության է տրվել այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսին է նոր պատերազմը կանխելու և ամբողջ աշխարհում խաղաղություն ամրապնդելու հնարավորության և դրա պայմանների հարցը։

Ստվերի մեջ թողնելով այս և նման մի շարք հարցեր, հեղինակը հնարավոր է համարում իր գրքի էջերը լցնել Կաուցկու, Ստեֆանոյ և այլոց «աշխատություններից» բաղված երկարաշունչ ցիտատներով կամ այդ ցիտատների շարադրանքով։ Ըստ որում պետք է նշել նաև, որ նրան միշտ չէ, որ հաջողվում է ամենայն համոզչությամբ ու սրությամբ մերկացնել այդ

հեղինակների թունամական հորինվածքների հակագիտական, ռեակցիոն էությունը։ Այսպես, 56—57 էջերում մեջ բերելով և մանրամասնորեն շարադրելով Կաուցկու զարգացման «թեորիան», ընկեր Վարդապետյանը իր հաշիվները մաքրում է Կաուցկու հետ մի այսպիսի սնամեջ նախադասությամբ. «Այսպիսի հայացքի մեջ ոչ միայն նորություն չկա, չկա նաև թարմություն։ Դա բուրժուական իդեոլոգների հին երգերից է»։

Ըստ երևույթին՝ զգալով նման «քննադատության» անբավարարությունը, հեղինակը փորձում է շարունակել այն, բայց կրկին սահմանափակվում է հին դավաճանի հակագիտական, հակամարքսիստական զառանցանքի վերարտադրմամբ։ Միայն վերջում, ձգտելով մի կերպ վերջապես ձեռք բաշել Կաուցկուց, ընկ. Վարդապետյանը բավարարվում է նրանով, որ Կաուցկու տեսակետը հայտարարում է «բուրժուական ամենառեակցիոն տեսակետ», փոխանակ ըստ էության մերկացնելու ռենեգատ Կաուցկու «թեորիաները», քանի որ արդեն ինքը իր աշխատության մեջ տեղ է տվել դրան։

Ընկ. Վարդապետյանի աշխատության մեջ կան մի շարք ոչ ճիշտ սահմանումներ։ Օրինակ, 63-րդ էջում նա գրում է, որ «իմպերիալիզմը կապիտալիզմի ստադիան է, նեխվող, մեռնող կապիտալիզմի ստադիան», մոռանալով նշել և ընդգծել, որ իմպերիալիզմը կապիտալիզմի բարձրագույն և վերջին ստադիան է։

Օպորտունիզմի էության ճիշտ բնորոշումների կողքին հեղինակը տալիս է նաև այնպիսի բնորոշումներ, որոնք չեն բացահայտում օպորտունիզմի դավաճանական բնույթը և խառնափոթություն են ստեղծում։ Ընկ. Վարդապետյանը՝ մերկացնելով օպորտունիստներին, գրքի 67-րդ էջում նշում է, որ նրանք «ճկուն, շարժուն տակտիկայի երկրպագու» են։ Անհասկանալի է, թե ինչո՞ւ տակտիկայի ճկունությունն ու շարժունությունը հրամցվում է իբրև ինչ որ բացասական երևույթ։ Չէ որ հենց ինքը ընկ. Վարդապետյանը իր գրքի 34-րդ էջում վկայակոչելով ընկեր Ստալինի ցուցումները, նշում է, որ սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը իրականություն դարձնելու համար այլ պայմանների թվում անհրաժեշտ է նաև պրոլետարիատի գիտակից մասի հերոսական, արգելքներ հաղթահարող գործունեություն, «տակտիկական ճկուն հնարների, ձևերի գործադրումը»։

Գրքի 33-րդ էջում հեղինակը գրում է. «Եթե իրականությունն իր յինելիության մեջ դրսևորվեր միայն մի հնարավորության ձևով, ապա այն ժամանակ ավելորդ կդառնար ամեն մի գործունեություն» (ընդգծումը հեղինակինն է)։ Այս ձևակերպումը արմատապես սխալ է։ Ե՛վ բնության և՛ մարդկային հասարակության մեջ որոշ հնարավորությունների իրականություն դառնալը ունի յուր իրականացման խիստ անհրաժեշտ և միակ ձևը։ Այսպես օրինակ՝ սոցիալիզմի հնարավորությունը իրականություն դարձնելու բոլոր բազմազան պայմանների ժամանակ էլ անհրաժեշտ է պրոլետարիատի դիկտատուրայի առկայությունը։ Այս անվիճելի ճշմարտության ընդունումը երբեք էլ չի տանում դեպի ֆատալիզմ, ինչպես այդ բխում է հեղինակի սխալ բնորոշումից։

Գրախոսվող գրքի հեղինակը գրում է. «Ստեղծագործ մարքսիզմը չի պնդում, թե ռևոլյուցիան անխուսափելի պարտադրականությամբ է օժտված այն իմաստով, որ նա «ծագում» է ճիշտ այնպես և այն կանոնավորությամբ, ինչպես, ասենք, արևը» (էջ 68—69)։

Այս անհաջող ձևակերպումը կարող է ընթերցողի մեջ սխալ միտք առաջացնել, որ իբր թե պրոլետարական ռևոլյուցիան «անխուսափելի պարտադրականությամբ» տեղի չի ունենում։ Այս կապակցությամբ չի կարելի չհիշել ընկեր Ստալինի հետևյալ թևավոր խոսքերը. «Ռուսական ռևոլյուցիան անխուսափելի է։ Նա նույնպես անխուսափելի է, ինչպես անխուսափելի է արևի ծագումը։ Կարո՞ղ եք միթե կանգնեցնել ծագող արևը» (Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. I, էջ 90)։ Հեղինակը գրում է. «Կոնստիտուցիոն պատրանքների մասին» իր նշանավոր հոդվածում Լենինը սահմանակետային ճշտությանը մոտեցող ձևով լուծեց մանր-բուրժուական տարրերի պայքարի հնարավորությունների սահմանները։ Նա գտավ, որ մանր բուրժուական մասսաների պարզ մեծամասնությունը դեռ ոչինչ չի լուծում և չի կարող լուծել, որովհետև կազմակերպվածությունը, քաղաքականապես գիտակցված ելույթները, դրանց կենտրոնացումը (որը հարկավոր է հաղթության համար),— այդ բոլորը փոշիացած միլիոնավոր գյուղական մանր տնտեսատերերին ի վիճակի է տալ կամ բուրժուազիայի կամ պրոլետարիատի ղեկավարությունը՝ նրանց նկատմամբ» (էջ 68)։

Աններելի է, երբ գրախոսվող գրքի հեղինակը, որը փորձում է «սահմանակետային ճշտությանը մոտեցող ձևով» լուսաբանել մանր-բուրժուական մասսաների, մասնավորապես գյուղացիական մասսաների «պայքարի հնարավորության սահմանները», կանգ չի առնում աշխատավոր գյուղացիության՝ որպես պրոլետարական ռևոլյուցիայի ռեզերվի, բանվոր դասակարգի հու-

սալի դաշնակցի, գյուղացիության ընդերքում եղած ռևոլուցիոն հնարավորությունները պրոլետարիատի ռևոլուցիայի հաղթանակի համար, օգտագործելու հարցերի վրա։ Հեղինակը մեջբերում անելով Լենինի վերևում նշված աշխատությունից, գրում է. «Լենինը գտնում էր, որպեսզի ժողովրդական մեծամասնությունը կարողանա իսկական մեծամասնություն ձեռք բերել ժողովրդի կառավարման գործում...» (էջ 68), այնինչ Լենինի մոտ, իրոք հետևյալն է ասված. «որպեսզի ժողովրդի մեծամասնությունը կարողանա դառնալ իսկական մեծամասնություն՝ պետության կառավարման գործում...» (Լենին, Երկեր, հատ. 25, էջ 246—247)։

Ընկ. Վարդապետյանի աշխատությունը կրում է շտապողականության և անփութության կնիք։ Առանձին տեղերում մարքսիզմի-լենինիզմի կլասիկների աշխատություններից բերված հատվածները տրված են աղավաղված թարգմանությամբ։

Աշխատության 90-րդ էջում աղավաղված ձևով է տրված ընկեր Ստալինի աշխատությունից բերված բաղվածքը։ Այսպես, Ի. Վ. Ստալինի երկերի 12-րդ հատորի 33—34 էջերում ասված է, որ սոցիալիզմի մեջ կապիտալիստների խաղաղ ներաճման Բուխարինի թեորիայի համաձայն «շահագործողները ներաճում են սոցիալիզմի մեջ»։ Չակերտների մեջ վերցված տողերը գրախոսվող գրքում սա.ացվել են այսպես «շահագործողները ներաճում են նոցիոնալիզմի մեջ»։

Հեղինակի անփութության մասին է խոսում նաև այն փաստը, որ մեջ բերելով Միխայլովսկուն պատկանող սուբյեկտիվ-իդեալիստական բնորոշումներից մեկը, ընկ. Վարդապետյանը իբրև այդ իդեալիստական բնորոշման աղբյուր մատնացույց է անում... Վ. Ի. Լենինի աշխատությունը (էջ 14)։

Վերջացնելով մեր գրախոսությունը, հարկ ենք համարում նշել նաև, որ ընկ. Վարդապետյանի գիրքը ունի կոմպոզիցիոն լուրջ թերություններ, որոնք հատկապես անթույլատրելի են գիտապոպուլյար աշխատության մեջ։ Նա զուրկ է շարադրանքի հստակ, որոշակի պլանից։ Տրամաբանական անցումները գրքի մի բաժնից մյուսը հաճախ բացակայում են կամ կրում են բոլորովին անսպասելի ու արհեստական բնույթ։ Ընորոշ է, որ 124 էջ բոնող այս գրքում ոչ գլուխներ կան, ոչ ենթաբաժիններ։

Չի կարելի լռությամբ անցնել նաև հեղինակի լեզվի ու ոճի կողքով։ Հաջող և սուր, պատկերավոր դարձվածքների կողքին գրախոսվող գրքում հանդիպում ենք նաև անհաջող արտահայտությունների, տափակ սրամտությունների, մետաֆորների, որոնք չեն կարող ընթերցողին տարօրինակ չթվալ և անբավականություն չառաջացնել նրա մեջ։ Այսպես, օրինակ՝ ընկ. Վարդապետյանը գործածում է այնպիսի «պատկերավոր» արտահայտություններ, ինչպիսիք են «թամբել սոցիալիզմի ձին» (էջ 108), «թամբել բացարձակ անհնարինության երևակայական նժույգը» (էջ 42), «որտալ ճշմարտության ձուկը», (էջ 54), «կյանքի ծառի թափահարում» (էջ 40), «դիմադրության նվազ գծի թեորիա» (էջ 47)։

Հիշատակված թերությունները, որոնք զգալի չափով նվազեցնում են գրախոսվող աշխատության գիտական և դաստիարակչական նշանակությունը, կարող էին տեղ չգտնել նրա մեջ, եթե հրատարակումից առաջ այն ենթարկվեր մասնագետների կոլեկտիվ քննարկմանը, ինչպես այդ նախատեսված է կատարել Ակադեմիայի բոլոր գիտական հիմնարկներում։

Մեր հեղինակները չպետք է գերագնահատեն իրենց ուժերը և խուսափեն տպագրությունից առաջ իրենց աշխատությունները լուրջ և խիստ կոլեկտիվ քննարկման ներկայացնելուց։

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ